

Մուսաննա ՉԱԲԱՐՅԱՆ

ՍԱՐ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Տեղանունները նախ և առաջ հատուկ անուններ են, այսինքն՝ նրանց ամենից բնորոշը անվանողական արժեքն է: Մակայն տեղանունները, անվանողական արժեքից զատ, ունեն նաև այլ արժեք: Նրանք սովորաբար ունենում են տեղեկութային խորք, որի բացահայտման համար անհրաժեշտ է դրանք վերլուծել, դասակարգել, գտնել կառուցվածքային ու ծագումնաբանական օրինաչափություններ, պարզել դրանց ներքին ձևի արտալեզվական պայմանավորվածությունները:

Տեղեկութային խորք ասելով՝ նկատի ունենք սովյալներ

- այն լեզվի մասին, որով կազմվել է տեղանունը,
- այն ժողովրդի մասին, որ սովել է այդ անունը,
- այն մշակույթի մասին, որի շրջանակներում տրվել է անունը,
- այն ժամանակի մասին, երբ ծագել է անունը,
- այն տարածքի մասին, որտեղ ծագել և որին վերաբերում է անունը:

Իմաստային խորքից բացի՝ հետաքրքիր են նաև անվան խորհրդանշային արժեքը, տիպաբանական բնութագիրը, գործառական և բառակազմական շառավիղները, համանունները, հոմանիշները, տարբերակները:

Ամեն տեղանուն կարելի է ուսումնասիրել հետևյալ հայեցակետերով.

- տեղանվան բնույթը,
- ծագման ժամանակը և հազամանքները,
- ծագման լեզուն,
- բովանդակությունը և ստուգաբանությունը,
- կառուցվածքը և կազմությունը,
- հետագա տարածումը, փոխակերպումները, ճյուղավորումները, կիրառությունները,
- ուղղագրությունն ու ուղղախոսությունը, տառադարձումն ու հնչադարձումը:

Մույն հոդվածում առանձնացվել է տեղանունների մի համեմատաբար ոչ մեծ խումբ՝ *սար* բաղադրիչով կազմված լեռնանունները, և կատարվել է դրանց կառուցվածքային ու իմաստային քննություն: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»¹ տեղ է գտել *սար* բաղադրիչով ավելի քան 300 լեռնանուն: Այս թիվը մեծ չէ լեռնային երկրի համար: Բայց պետք է նկատի ունենալ, որ կան հոմանիշ այլ բաղադրիչներ (լեռ, բլուր, դաղ, թափա և այլն), որոնք մույնքան կամ մույնիսկ ավելի արտադրողական են:

«Սար» բաղադրիչով լեռնանուններն ըստ տեսակի լինում են լեռնաշղթա, լեռնաճյուղ, լեռնաբազուկ, լեռնագագաթ, լեռ: Ըստ վերոհիշյալ բառարանի տվյալների՝

- լեռ են *Ամբերդասարը, Այրիսարը, Անդրքասարը, Աջասարը, Ասեղասարը, Արամասարը, Արարոց սարը, Արթունասարը, Արծաթասարը, Արջասարը, Բոխիսարը, Գարուսարը, Գորգիովտու սարը, Գռասարը, Գրասարը, Ելասարը, Եղջերվասարը, Ընձաքիսարը, Թթասարը, Իշխանասարը, Լանջասարը, Խթերու սարը, Խնձորի սարը, Ծաղկասարը, Ծառասարը, Ծխեկու սարը, Կարմիր սարը, Կաքավասարը, Կրակասարը, Կրասարը, Հաշտասարը, Հովասարը, Մանկասարը, Մեծ սարը (Մեծսարը), Մեղրիսարը, Նավասարդի սարը, Նիգասարը, Ոսկեսարը, Չալսարը, Չարագլուսարը, Պելսարը, Պղնձասարը, Պուտուկսարը, Մարակը (Մարակն), Միմսարը, Մմբատասարը, Վանքասարը, Տապանասարը, Տաք ջրի սարը, Ուխտի սարը, Քանասարը, Օձասարը, Օջախսարը և այլն:*
- Լեռնագագաթ են *Աղջկասարը, Ամպիսարը, Այծասարը, Անգեղասարը, Աչքասարը, Առնոսասարը, Բաղաջսարը, Գեղասարը, Գեղարդասարը, Գնդասարը, Գողթանասարը, Գութանասարը, Եզնասարը, Եղնասարը, Երկաթասարը, Զոհասարը, Թռչնասարը*

¹ Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Մտ. Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա բ ե դ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (երեք հատորով), Եր., 1986-2001:

րը, *Լեռնասարը, Խաչիսարը, Խոտրովասարը, Ծաղկասարը, Ծովասարը, Կալերիսարը, Կարկտասարը, Կլորսարը, Կրասարը, Հարսնասարը, Հովասարը, Գկուքսարը, Մարտիկա սարը, Պահակասարը, Պայտասարը, Ռումբասարը, Սամսարը, Մարիսարը, Մարվարդը, Սեղան սարը, Սեմասարը, Սեասարը, Սպիտակասարը, Մրբիսարը, Վահագնասարը, Վանքասարը, Վեցկեսարը, Վիշապասարը, Յողասարը, Յորնասարը, Փոցխասարը, Փոքրասարը, Զաջերի սարը* և այլն:

- *Լեռնաշղթա են Դալիսարը, Թեքսարը, Կատարասարը, Կողբասարը, Մթնասարը, Պաղասարը, Սալնասարը, Սարերը, Սեղան սարը, Կատուսարի, Ամուլսարի, Գեղասարի, Սամսարի, Փիրամսարի լեռնաշղթաները, Լեռնակա սարերը, Ուխտյաց սարերը, Օլթիի սարերը* և այլն:
- *Լեռնաճյուղ է Բռնաշենի սարը:*
- *Լեռնաբազուկ է Փելասարը:*

1. Լեռնանունների կառուցվածքային քննություն. Բառակազմական թուղիկ վերլուծության արդյունքները հետևյալն են.

Պարզ են *Սար* և *Սարեր* լեռնանունները: Բաղադրյալ են *սար* բաղադրիչով մյուս բոլոր լեռնանունները: Ընդ որում՝ պարզ ածանցավորներ այս ցանկում չկան, բարդ են *Գամասար, Գեղասար, Գարուսար, Գռասար, Գրասար, Եզնասար, Թեքսար, Լանջասար, Թթասար, Չոհասար, Լճասար, Կովասար, Կեռասար, Պահակասար, Կելիդոնյան սար, Չոմագիսար, Չիթահանից սար* և այլն, բարդ ածանցավոր են *Արթունասար, Արտոյունասար, Գեղարքունյաց սար, Իշխանասար, Լուսավորչի սար, Կելիդոնյան սար, Ողմասարիք, Սառցակասար, Վանքասար, Տաղոնաց սար, Տապանասար, Զեխուտի սար, Թռչնասար, Կլորսար, Գկուքսար, Սեմակասար, Պահակասար, Սասնգվույն սայրն, Վեցկեսար* և այլն:

Կան նաև քերականական մասնիկ (հոլովիչ, հոգնակերտ, բայական վերջավորություն և այլն) պարունակող անուններ՝ *Զաջերի սար, Ուխտի սար, Տաշածսար, Ջրով Լորո սար, Չիթահանից սար, Գողթանասար, Բաղացսար, Աղջկասար, Ծխեկու սար, Խթերու սար, Գեղարքունյաց սար, Գեքլվա սար* և այլն:

Բարդ լեռնանունները կարելի է դասակարգել նաև ըստ հարադրական և համադրական ձևերի: Օրինակ՝ հարադրական են *Բերդի սարը, Գարոյի սարը, Գեքլվա սարը, Գորգեովտու սարը, Գեղարքունյաց սարը, Տաք ջրի սարը, Լուսավորչի սարը:* Համադրական են *Գանձասարը, Բոխիսարը, Բաղացսարը, Գեղասարը, Գեղասարը:*

Սար բաղադրիչը հիմնականում հանդես է գալիս եզակի թվով (օրինակ՝ *Եզնասար, Ծաղկասար*), բայց այն կարող է հանդես գալ նաև հոգնակի թվով (օրինակ՝ *Յալիճու սարեր, Սարեր, Օլթիի սարեր*): Բաղադրյալ լեռնանունների մեծ մասում *սար*-ը վերջնաբաղադրիչ է: Օրինակ՝ *Գարոյի սար, Գուքանասար* և այլն: Կա դեպք՝ *Արուսարդաղ (լեռ)*, երբ *սար* բաղադրիչը նախորդում է մեկ այլ վերջնաբաղադրիչի՝ չլինելով բառակազմում, այսինքն՝ միջնաբաղադրիչ է: Այս անվան մեջ փաստորեն երեք անգամ կրկնվում է հիմնաբառը (լրացյալը)՝ տարբեր լեզուներով և հոմանիչ ձևերով:

Մի ոչ մեծ խմբում *սար*-ը սկզբնաբաղադրիչ է: Օրինակ՝ *Սարակ, Սարակն, Սարի աղբյուր, Սարիսուրք, Սարվարդ, Սարվանդ* և այլն: Կան նաև մի խումբ բառեր, որոնց սկզբնաբաղադրիչը թվում է, թե հայերեն *սար* արմատն է (օրինակ՝ *Սարի դաղ, Սարիթափա, Սարիկայա, Սարգուլ, Սարկում, Սարպուլաք, Սարու (լեռ), Սարիչայ, Սարիբուռուն, Սարուշեն* և այլն): Դրանք հիմնականում թուրքերեն են, և սկզբնաբաղադրիչը հայերեն *սար*-ին համանուն կամ հարանուն թուրքերեն *սարի*-«ղեղին» արմատն է՝ տարբեր աղավաղումներով: Այսինքն՝ *Սարի դաղ* նշանակում է «ղեղին սար», *Սարիթափա*՝ «ղեղին բլուր», *Սարիկայա*՝ «ղեղին ժայռ», *Սարգուլ*՝ «ղեղին վարդ», *Սարկում*՝ «ղեղին ավազ», *Սարպուլաք*՝ «ղեղին աղբյուր», *Սարու (լեռ)*՝ «ղեղին (լեռ)», *Սարիչայ*՝ «ղեղին գետ», *Սարիբուռուն*՝ «ղեղին սուր», *Սարուշեն*՝ «ղեղին շեն»:

2. Լեռնանունների իմաստային քննություն. Ըստ անվանման իմաստային հիմունքի դասակարգելիս առաջանում են հետևյալ ենթախմբերը:

ա. Մթագնած անվանումներ, գիտականորեն չստուգաբանվող անվանումներ՝ *Անդրբասար, Անոսասար, Մարտիկա սար (Մարաթուկ), Միմսար, Սալնասար, Սամսար (Սամասար), Զանասար,*

բ. ստուգաբանված անվանումներ, որոնց հիմքում կարող է լինել.

- 1) Ռեյիեֆի որևէ հատկանիշ, որը կարող է արտահայտվել ուղղակիորեն կամ փոխաբերաբար՝ որևէ համեմատության հիման վրա, և վերաբերել՝
 - տեղանքի ձևին՝ բարձունք, հարթավայր, իջվածք, ցցվածք, փքվածք և այլն, օրինակ՝ *Ասեղասար, Գնդասար, Թեքսար, Կոթրսար, Կեռասար, Պոլոզսար, Տափասար, Խթեռու սար, փոխաբերաբար՝ Աչքասար, Եկոթսար, Նալսար, Պայտասար, Շղասար, Չաթալսար («երկճյուղ սար»), Պոռշի սար, Պուտուկսար, Սեղանասար, Սեղան սար, Սարաջուղ («սարաճյուղ»), Տաշածսար, Տապանասար, Ջանասար, Ուրասար (Ուռասար) («պալարասար»), Քոշասար («գույգ սար»),*
 - տեղանքի թողած տպավորությանը, հիմնականում՝ փոխաբերաբար, օրինակ՝ *Աղուսար Արևմտյան, Գեղասար, Պառավասար, Կոջասար («ծեք սար»), Ոսկեսար, Կզրլ սար («ոսկի սար»), Պելսար (Պելասար) («գիժ սար»), Փելասար («լավ երևացող սար»), Զյուտուսարը (Զյուտուզսար) («խռոված սար»),*
 - տեղանքի գերիշխող գույնին, օրինակ՝ *Կյաժսար, Գարասար (Կարասար, Դարայսար), Կարսիք սար, Չալսար, Սևասար (Սևսար), Սպիտակասար, Սարսար (Սարըսարդաղ) («դեղին սար»),*
 - անվանվող առարկայի չափին, օրինակ՝ *Մեծսար, Փոքրասար, փոխաբերաբար՝ Մանկասար, Մթնասար,*
 - անվանվող առարկայի տեղադրությանը և հարևան առարկաների հետ ունեցած տարածական հարաբերությանը, օրինակ՝ *Մենակսար, Մենսար, Տակսար, Աջասար, Լանջասար, Կատարասար, փոխաբերաբար՝ Այրիսար, Պահակասար, Սահմանասար,*
 - բուսածածկույթի առկայությանը կամ բացակայությանը, հիմնականում՝ փոխաբերաբար, օրինակ՝ *Քաչալ սար, Զյոսա սար, Անուսար,*
 - կլիմայական առանձնահատկություններին, օրինակ՝ *Ամպիսար, Կարկտասար, Հովասար, Պաղասար, Սառնասար, Տաք սար, Ցողասար,*
 - լեռան հրաբխային գործունեությանը՝ *Կրակասար, Ռումբասար, Ուռումբա սար:*
- 2) Ջրային որևէ հատկանիշ, որը կարող է լինել՝
 - լիճ, օրինակ՝ *Լճասար, Ծովասար, Յալիճու սարեր,*
 - աղբյուր կամ դրա հետ առնչվող ավազան, օրինակ՝ *Աղբյուրի-սար, Գռասար, Սարակ (Սարակն), Սարբուլախ, Տաք ջրի սար, Սառցակասար, Ջրով Լորո սար,*
- 3) Բուսանուն, որը կարող է լինել՝
 - ծառ կամ թուփ, օրինակ՝ *Բոխիսար, Ծառասար, Քեխուտի սար,*
 - պտուղ, օրինակ՝ *Գարուսար, Թթասար, Խնձորի սար, Ցորնասար,*
 - ծաղիկ, օրինակ՝ *Ծաղկասար, Սարվարդ,*
 - խոտ, կանաչեղեն, օրինակ՝ *Շրեշտասար (Շիրիշի սար):*
- 4) Կենդանու անվանում, որը կարող է լինել՝
 - թռչուն, օրինակ՝ *Թռչնասար, Կաքավասար, Ջրով Լորո սար,*
 - ընտանի կենդանի, օրինակ՝ *Այծասար, Եզնասար, Կովասար (Կովսար), Ցուլասար,*
 - վայրի գիշատիչ, օրինակ՝ *Առյուծասար, Արջասար, Արջիսարը, Գայլասար,*
 - որսի կենդանի, օրինակ՝ *Լապաստրակասար, Եղնասար, Եղջերասար, Եղջերվասար,*
 - սողուն, օրինակ՝ *Վիշապասար, Օճասար:*
- 5) Արտադրական անվանում, որը կարող է վերաբերել՝
 - ընդերքի հանածոներին, օրինակ՝ *Աղասար, Արծաթասար, Գանձասար, Երկաթասար, Կրասար, Սարմարսար, Պղնձասար,*
 - տվյալ տեղանքում կատարվող աշխատանքային գործունեությանը, օրինակ՝ *Գութանասար, Կալերիսար, Չիթահանից սար:*
- 6) Հասարակական (ընկերային) հատկանիշ, օրինակ՝ *Աղջկասար, Հաշտասար, Հարսնասար, Դուլասար, Իշխանասար, Մեծ Իշխանասար, Քաջերի սար:*
- 7) Մարդանուն, որը կարող է լինել՝
 - թագավորի անուն, օրինակ՝ *Լևոնասար, Խոսրովասար, Սմբատասար,*
 - այլ իշխանավորի կամ հասարակ անձի անուն, օրինակ՝ *Արդյանհասար, Արդուլսար Աբուսարդադ, Ավագիսար, Արթինասար (Արտթյունասար), Գարոյի սար, Ընձաքիսար, Խաչումասար, Խաջիլուսար, Խաչուիսար, Կյուլխասի սար, Հայտարի սար,*

Մանիզարի սար, Մավասի սար, Մուրադսար, Մանդուխտասար, Մահակասար, Մոնասար, Մուլեյմանասար, Վանեսասար, Վեցկեսար, Ունանիսար:

8) Ցեղանուն կամ տոհմանուն, օրինակ՝ *Անգեղասար, Արամասար, Բեյ-սար (Բելվասար), Նեբրովթ (Նեբրովթի սար, Նամբութա սար), Մեմասար, Մալականի սար, Պետրեցվոց սար, Սասնցվույն սայրն:*

9) Մշակութային հատկանիշ, որը կարող է վերաբերել՝

- կրոնական ըմբռնումներին, սրբերին, օրինակ՝ *Արարոց սար, Չոհասար, Լուսավորչի սար, Խաչիսար, Մեծ Նահատակի սար, Նահատակասար, Սարին Մուրբ Սարգիս, Մուրբ Գևորգի սար, Սարիսուրբ, Սրբիսար, Մուրբ սար, Վահագնասար, Ուխտասար, Ուխտի սար, Ուխտյաց սարեր,*

- մշակույթի հուշարձաններին, շինություններին, օրինակ՝ *Ամբերդասար, Բերդի սար, Գեղարդասար, Վանքասար, Քիլիսա սար,*

- կենցաղային-ազգագրական երևույթներին, օրինակ՝ *Նավասարդի սար, Չարագլուսար, Գրասար, Զոչի սար:*

10) Հարևան այլ տեղանուն, որը կարող է լինել՝

- բնակավայրի անուն, օրինակ՝ *Բալովտու սար, Բոնաշենի սար, Լեռնակա սարեր, Խանդրիսու սար, Ծխեկու սար, Կոտուց սարը (Քեթուզար), Կուրթանասար, Հաղբուքի սար, Մաստարայի սար, Նիջասար, Մելիսի սար, Մալխուսի սար, Տաղոնաց սար, Քաղատակա սար,*

- գավառի անուն, օրինակ՝ *Բաղացսար, Գեղարքունյաց սար, Գողթանսար, Կապրուսար (Կյուպրուսար, Քյափրուսար) (նախկին Կյուպարա մահալի՝ գավառակի անունից), Կողբասար, Մեղրիսար, Նիգասար, Ողմասարիք, Մասնո սար, Օլթիի սարեր,*

- գետահովտի անուն, օրինակ՝ *Գորգհովտու սար, Փշովտի սար:*

Մեզ չհաջողվեց պարզել մի քանի անվանումների ծագումն ու իմաստը՝ *Կասուսար, Կելիդոնյան սար (Քելիտոնյան սար), Հավլաներ-սար, Հաֆդասար, Լույլասար, Մնավասար, Շիպասար, Չիզասար, Փովերու սար, Փիրամսար* և այլն:

Կարելի է կատարել նաև դասակարգում ըստ անվանման իմաստային անմիջականության: Այս հատկանիշով առանձնանում են հետևյալ խմբերը.

- փոխանցված անուններ, այսինքն՝ սկզբնապես իբրև այլ տեղանուն առաջացած, հետո նույնությամբ լեռնանուն դարձած միավորներ: «Մար» բաղադրիչով անունների շարքում այդպիսի օրինակ չկա, քանի որ դրանք բոլորն էլ բնականաբար, ի սկզբանե կազմվել են իբրև լեռնանուններ: Հազվադեպ հանդիպում են «սար» վերջնաբաղադրիչով անուններ, որ միայն ոչ լեռնանուն են (օրինակ՝ *Քանիսար* գյուղ), բայց ակնհայտ է, որ սկզբնապես դրանք եղել են լեռնանուն, հետո փոխանցվել են մեկ այլ առարկայի, իսկ իբրև լեռնանուն կամ վերացել են, կամ պարզապես չեն արձանագրվել բառարանում:

- այլ տեղանունների հիման վրա կազմված լեռնանուններ, օրինակ՝ *Ամբերդասար, Գեղարդասար, Բալովտու սար, Բոնաշենի սար, Լեռնակա սարեր, Խանդրիսու սար, Մեղրիսար, Նիգասար, Ողմասարիք, Մասնո սար, Օլթիի սարեր, Գորգհովտու սար, Փշովտի սար* և այլն:

- զուտ լեռնանուններ: Սրանք իրենց հերթին լինում են՝

ա) հասարակ անունների և ոչ տեղանուն հատուկ անունների հիման վրա կազմված լեռնանուններ, օրինակ՝ *Մեծսար, Թեքսար, Մթնասար, Տաշածսար, Տաք ջրի սար, Խնձորի սար, Եղնասար, Երկաթասար, Գութանասար, Իշխանասար, Հարսնասար, Լեռնասար, Վանեսասար, Անգեղասար, Արամասար, Վահագնասար, Լուսավորչի սար, Բերդի սար, Վանքասար, Ուխտասար, Գրասար, Զոչի սար* և այլն:

բ) պարզ լեռնանուններ, որոնք են՝ *Մար, Մարեր*: Մար բաղադրիչով մի շարք զուտ լեռնանուններ ունեն նաև իրենց պարզ տարրերակը, օրինակ՝ *Անդրքասար - Անդրք, Մնավասար - Մնավ, Մարութկա սար - Մարաթուկ, Միմսար - Միմ* և այլն:

Այս դասակարգումը աշխարհագրական միավորների, տվյալ դեպքում՝ լեռների վերաբերյալ լրացուցիչ հետաքրքիր տեղեկություններ է տալիս, որոնք բացահայտվում են անվան վերլուծության միջոցով և այլ կերպ կարող են հայտնի չլինել: Իհարկե, անունների մի մասն այնքան հասկանալի կառուցվածք ունի, որ տեղեկությունն ինքնուրուպից կարող է բացահայտվում: Օրինակ՝ Շրեշտասար անվանումը հուշում է, որ տվյալ

լեռան լանջերը հարուստ են շրեշտ (շրեշ, շիրիշ) ուտելի բույսով: Այլ դեպքերում անվանումը կարելի է տարբեր կերպ մեկնաբանել, և միայն հավելյալ գիտելիքն է թույլ տալիս իմանալու անվան իսկական իմաստը: Օրինակ՝ Գ-անձասար կոչվել է Արցախի հայտնի լեռը, քանի որ նրա ընդերքում արծաթի հանքեր կան: Որոշ դեպքերում էլ անվան իմաստը առայժմ մնում է անհայտ: Չեն օգնում նաև ժողովրդական ստուգաբանությունները: Մնում է հուսալ, որ գիտական հետազոտությունները աստիճանաբար հիմք կստեղծեն բացահայտելու Անդոք, Առնոս, Միմ, Նիգ, Ողմ (Ողմ), Նիշ (Նիշ) և նման այլ հնագույն անունների ծագումն ու իմաստը:

СТРУКТУРНО-СЕМАНТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ НАИМЕНОВАНИЙ ГОР С КОМПОНЕНТОМ САР (սար)

___ Резюме ___

___ С.Закарян ___

В данной статье рассматривается небольшая группа топонимии с компонентом сар (սար) и дается их структурно - семантический анализ.

Выясняется, что наименования гор, как составные лексические единицы, оформляются на следующих принципах: признак рельефа (форма, цвет, мера); признак воды (озеро, река, источник); имена растений; признак социального общества; имя человека (ономастика); имя племени или клана; признак культуры (религия, исторические памятники, традиции); соседнее топонимическое имя и т.д..